

## Հ ա շ վ ե տ վ ու թ յ ու ն

### ԼՂՀ ֆինանսների նախարարության ՖՎ տեսչության 2011թ. կատարած աշխատանքների մասին

Նախարարության ֆինանսական վերահսկողության տեսչության կողմից 2011թ. լրիվ կամ մասնակի ստուգումներ է իրականացվել հանրապետության տարածքում գործող 98 իրավաբանական անձանց՝ տնտեսվարող սուբյեկտների և բյուջետային հիմնարկությունների մոտ, այդ թվում՝ 21 բյուջետային հիմնարկներում, 40 պետական ոչ առևտրային կազմակերպություններում, 13 հիսուն տոկոս և ավելի պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում, 5 ոչ պետական ձեռնարկությունում, 10 հասարակական կազմակերպություններում, 2 քաղաքային և 7 գյուղական համայնքներում:

Ստուգումների արդյունքներով հայտնաբերվել և լրացուցիչ հաշվարկվել է 298785.0 հազ.դրամի անօրեն ծախսումներ, ապրանքանյութական արժեքների և դրամական միջոցների պակասորդներ և ավելցուկներ, այդ թվում՝

- բյուջե պակաս հաշվարկված գումարներ՝ 522.6 հազ.դրամ,
- անօրինական դուրս գրումներ, վճարումներ և ծախսեր՝ 3263.0 հազ.դրամ, որից ենթակա է վերականգնման բյուջե՝ 1660.7 հազ.դրամ, ձեռնարկության հաշվին՝ 1036.5 հազ.դրամ, ենթակա է հաշվառումով վերաձևակերպման՝ 565.8 հազ.դրամ,
- փաստաթղթերով չհիմնավորված ծախսեր՝ 551.5 հազ.դրամ, որից ենթակա է վերականգնման բյուջե 250.5 հազ.դրամ, ձեռնարկության հաշվին՝ 301.0 հազ.դրամ,
- նախահաշիվներով ավելի նախատեսված գումարներ՝ 1481.4 հազ.դրամ, որը ենթակա է վերականգնման բյուջե,
- ոչ նպատակային, անարդյունավետ ծախսեր՝ 313.7 հազ.դրամ, որից ենթակա է վերականգնման բյուջե 220.5 հազ.դրամ, ենթակա է հաշվառումով վերաձևակերպման՝ 93.2 հազ.դրամ,
- աշխատանքների և ծառայությունների հավելագրումներ՝ 27557.6 հազ.դրամ, որից ենթակա է վերականգնման բյուջե՝ 16829.9 հազ.դրամ, ձեռնարկության հաշվին՝ 521.5 հազ.դրամ, ֆինանսավորումից պակասեցման ենթակա 5444.5 հազ.դրամ, ենթակա է հաշվառումով վերաձևակերպման՝ 4761.7 հազ.դրամ,
- նորմերի խախտումներ՝ 21352.0 հազ.դրամ, որից ենթակա է վերականգնման բյուջե՝ 20801.0 հազ.դրամ, ձեռնարկության հաշվին՝ 16.9 հազ.դրամ, ենթակա է հաշվառումով վերաձևակերպման՝ 534.1 հազ.դրամ,

- գերաժախս՝ 471.6 հազ.դրամ, որից ենթակա է վերականգնման բյուջե՝ 382.0 հազ.դրամ, ձեռնարկության հաշվին՝ 83.2 հազ.դրամ, ենթակա է հաշվառումով վերաձևակերպման՝ 6.4 հազ.դրամ,
- այլ խախտումներով արձանագրված գումարներ՝ 7942.3 հազ.դրամ, որից ենթակա է վերականգնման բյուջե՝ 10.3 հազ.դրամ և հաշվառումով վերաձևակերպման ենթակա՝ 7932.0 հազ.դրամ,
- ավելցուկ՝ 235164.5 հազ.դրամ,
- պակասորդ՝ 164.4 հազ.դրամ:

Նշված գումարներից պետական բյուջե լրացուցիչ հաշվարկված գումարները կազմել են 41077.7 հազ.դրամ, համայնքային բյուջե հաշվարկված գումարները կազմել են՝ 1081.2 հազ.դրամ, ձեռնարկության հաշվին վերականգնման ենթակա գումարները՝ 1959.1 հազ.դրամ, ֆինանսավորումից պակասեցման ենթակա գումարները՝ 5444.5 հազ.դրամ, հաշվառումով վերաձևակերպման ենթակա գումարները՝ 13893.2 հազ.դրամ:

Ապրանքանյութական արժեքների և դրամական միջոցների պակասորդները կազմել են 164.8 հազ.դրամ, որից 1 բյուջետային հիմնարկում 30.4 հազ.դրամ, 3 պետական ոչ արևտրային կազմակերպություններում՝ 18.9 հազ.դրամ, 1 գյուղական համայնքում՝ 115.5 հազ.դրամ:

Ավելցուկը կազմել է 235164.5 հազ.դրամ, որից՝ 3 բյուջետային հիմնարկներում 96.3 հազ.դրամ, 7 պետական ոչ արևտրային կազմակերպությունում 137.9 հազ.դրամ, 2 հիսուն տոկոս և ավելի պետական մասնակցությամբ արևտրային կազմակերպությունում 865.6 հազ.դրամ, 4 գյուղական համայնքներում՝ 234064.7 հազ.դրամ:

Լրացուցիչ հաշվարկված 298785.0 հազ.դրամի անօրինական ծախսերից, ապրանքանյութական արժեքների և դրամական միջոցների պակասորդներից ու ավելցուկներից վերականգնվել/վերաձևակերպվել է 260250.2 հազ.դրամ, որից՝ պետական բյուջե՝ 12779.1 հազ.դրամ, համայնքային բյուջե՝ 506.2 հազ.դրամ, ձեռնարկության հաշվին՝ 799.6 հազ.դրամ, ֆինանսավորումից պակասեցվել է՝ 5444.5 հազ.դրամ, հաշվառումով վերաձևակերպվել է 240720.8 հազ.դրամ:

Ապառքի գումարները կազմում են 38534.8 հազ.դրամ, որից՝ պետական բյուջեին՝ 28298.6 հազ.դրամ, համայնքային բյուջեին՝ 575.0 հազ.դրամ, ձեռնարկության հաշվին՝ 1159.5 հազ.դրամ, հաշվառումով վերաձևակերպման ենթակա՝ 8501.7 հազ.դրամ:

Պետական բյուջե չվերականգնված գումարները հիմնականում «Քառվաճարի շրջանային բուժմիավորում» ՊՈԱԿ, «Ջրամատակարարում և ջրահեռացում» ՓԲԸ և 2011թ. IV-րդ եռամսյակի վերջում հայտնաբերված գումարների ապառքներն են:

Նախորդ՝ 2010թ. կատարված ստուգումների արդյունքներով լրացուցիչ հաշվարկված գումարների գծով ապառքներից 2011թ. վերականգնվել/վերաձևակերպվել է 15141.6 հազ.դրամ, որից պետական բյուջե՝ 13837.2 հազ.դրամ, ձեռնարկության հաշվին՝ 146.4 հազ.դրամ, հաշվառումով վերաձևակերպվել է 1158.0 հազ.դրամ:

Ընդամենը 2011թ. պետական բյուջե է վերականգնվել 26616.3 հազ.դրամ, որից 2011թ. արդյունքներով 12779.1 հազ.դրամ, 2010թ. ապառքի գումարներից 13837.2 հազ.դրամ: Համայնքային բյուջե վերականգնված գումարները 2011թ. կազմել է 506.2 հազ.դրամ: Ձեռնարկության հաշվին է վերականգնվել 946.0 հազ.դրամ, որից 2011թ. արդյունքներով 799.6 հազ.դրամ, 2010թ. ապառքի գումարներից 146.4 հազ.դրամ: Ֆինանսավորումից պակասեցված գումարները 2011թ. կազմել է 5444.5 հազ.դրամ: Հաշվառումով վերաձևակերպված գումարները կազմել են 241878.8 հազ.դրամ, որից 2011թ. 240720.8 հազ.դրամ, 2010թ. ապառքի գումարներից 1158.0 հազ.դրամ:

Ստուգման արդյունքներով ութ հիմնարկ-ձեռնարկության նյութերը ներկայացվել են ԼՂՀ ԿԱ ոստիկանություն և մեկ հիմնարկ-ձեռնարկության նյութերը ներկայացվել են ԼՂՀ Գլխավոր դատախազություն: